

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Արգել համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ Կոտայքի մարզի Արգելի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր 3,2-2)

1. Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված պարտականություններ.

2. Կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները.

3. Մասնակցում է դրված գործառնություններից բխող խնդիրների լուծմանը և գնահատմանը

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1) առնվազն միջնակարգ կրթություն.

2) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Հանրային ծառայության մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Տեղական տուրքերի մասին>>, <<Հողհարկի մասին>> <<Գույքահարկի մասին>> <<Զինապարտության մասին>> օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

3) Տիրապետել անհրաժեշտ տեղեկատվությանը.

4) Համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանա 2019 թվականի հունվարի 16-ին ժամը 12:00-ին, Արգելի համայնքապետարանի շենքում (գ. Արգել 11-րդ փողոց 3-րդ շենք հասցեում):

Փաստաթղթերի ներկայացման վերջին ժամկետն է 30.12.2018թ:

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)

- տվյալ պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին:

- արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին

- մեկ լուսանկար 3x4 սմ չափի

- անձնագրի պատճենը

Փաստաթղթերը ընդունվում են Արգելի համայնքապետարանի աշխատակազմում, հեռ. 093-168-468 կամ ք.

Հրազդան, Կենտրոն վարչական շենք, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀՕՀ բաժնում, հեռ. 0223-2-34-13, ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: